«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, г.Каджаран, 3309, ул. Лернагорцнери 18. Тел (+374 285) 3 31 31, адрес эл. почты: info@zcmc.am

04.12.2024թ.

Մրցույթի անցկացման հայտարարություն 2025 թվականին պղնձի և մոլիբդենի խտանյութերի փոխադրման համար

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ Ընկերությունը հայտարարում է բաց մրցույթ 2025 թվականի ընթացքում ներքոնշյալ երթուղիներով տրանսպորտային ծառայությունների մատուցման գծով.

№	***Երթուղի (խտանյութի փոխադրում) / 1 տոննայի համար***
1	ՀՀ, Քաջարան – ՀՀ, Երևան
2	ՀՀ, Քաջարան – ՀՀ, Չարենցավան
	Երթուղի (այլ բեռների փոխադրում) / 1 տոննայի համար
3	ՀՀ, Չարենցավան – ՀՀ, Քաջարան
4	ՀՀ, Չարենցավան – ՀՀ, Կապան
5	ՀՀ, Երևան - ՀՀ, Քաջարան
6	ՀՀ, Երևան - ՀՀ, Կապան

Բարձումը՝ ըստ տրանսպորտային միջոցների թույլատրելի բեռնատարողության և մեկ առնիի վրա թույլատրելի առավելագույն բեռնվածության՝ համաձայն ՀՀ Կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1106 որոշման:

ԿԱՐԵՎՈՐ Է (!): Սա նշանակում է, որ անվտանգության նկատառումներից ելնելով և հնարավոր տույժերից և տուգանքներից խուսափելու համար, բարձման ընթացքում հիմք կընդունվի ստորև նշված սահմանաչափերից նվազագույնը.

- Բեռնատարողություն՝ ըստ տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի,
- Մեկ առնիի վրա առավելագույն թույլատրելի բեռնվածություն,
- Տրանսպորտային միջոցի թույլատրելի առավելագույն քաշ (մեքենայի քաշ + բեռի քաշ):

Օրինակ, եթե ՏՈՆԱՐ մակնիշի տրանսպորտային միջոցի դեպքում

- ✓ բեռնատարողությունը, ըստ տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի, 14 տոննա է,
- ✓ երկու առնի ունեցող տրանսպորտային միջոցի դեպքում մեկ առնիի վրա առավելագույն թույլատրելի բեռնվածությունը 9 տոննա է (ընդհանուր թույլատրելի բեռնվածությունը՝ 18 տոննա),
- ✓ հաշվի առնելով տրանսպորտային միջոցի առավելագույն թույլատրելի քաշը՝ բեռի քաշը չի կարող գերազանցել 13 տոննան,

ապա այն կբարձվի 13 տոննայից ոչ ավել (այս դեպքում բարձման համար հիմք կհանդիսանա տրանսպորտային միջոցի թույլատրելի առավելագույն քաշ (մեքենայի քաշ + բեռի քաշ):

Կանխատեսվող տարեկան փոխադրման ծավալը 250 000 տոննա է:

Մրցույթի արդյունքներով կընտրվի(են) ընկերություն(ներ), որի(որոնց) հետ նախատեսվում է կնքել բեռնափոխադրման պայմանագիր(եր) 2025 թվականի համար:

Վճարման պայմանները՝ մատուցված ծառայությունների համար հաշիվ-ապրանքագրի դուրսգրումից հետո 45 օրվա ընթացքում:

Կոմերցիոն առաջարկների ընդունման պայմանները.

Խնդրում ենք ուղարկել Ձեր առաջարկները **2 հատ փակ ծրարներով, որոնց փակման տեղերում դրված կլինեն ընկերության պաշտոնական կնիքը:**

Առաջին ծրարը պետք է պարունակի (1) Ընկերության վերջին հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունները, (2) Ընկերության պետական գրանցման վկայականը, (3) սեփական կամ վարձակալած ՏՄ ցանկը և առկայությունը հավաստող փաստաթղթերը (տեխնիկական անձնագրերը): Այն դեպքում, եթե փոխադրման համար որպես ենթակապալառու կներգրավվեն երրորդ կազմակերպություններ, ապա անհրաժեշտ կլինի նաև կցել տեղեկատվություն այդ կազմակերպությունների թվի մասին:

Երկրորդ ծրարը պետք է պարունակի կոմերցիոն առաջարկը՝ նշելով բեռնափոխադրման արժեքները առանց ԱԱՀ, վերոնշյալ երթուղիներից յուրաքանչյուրի մասով:

Յուրաքանչյուր ծրարի վրա պետք է հստակ նշված լինի. **«Տեխնիկական և ֆինանսական տեղեկատվություն»**՝ առաջին ծրարի դեպքում, **«Կոմերցիոն առաջարկ»**՝ երկրորդ ծրարի դեպքում: Յուրաքանչյուր ծրար պետք է կնքված լինի

ընկերության կնիքով բացման տեղերում: Յուրաքանչյուր ծրարի վրա պետք է գրված լինի հետևյալը. **«Բացել միայն Պայծառ Պետրոսյանի կողմից»**

Ծրարները պետք է ուղարկել հետևյալ հասցեով. ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ., 2 շ., «Կամար» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ, Նյութատեխնիկական ապահովման և տեխնիկական աջակցության տնօրինություն, Լոգիստիկայի վարչություն, Պայծառ Պետրոսյանի անունով, **մինչև 18:00 (GMT+4) 13.12.2024թ.**